

«ALISO CANYON»-Ի ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔ

Տուն վերադառնալ ներսի միջավայրի ստուգումից հետո



Los Angeles County Department of Public Health (Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժանմունքը [Հանրային առողջություն]) հրահանգել է SoCalGas-ին առաջարկել ու իրականացնել ներսի համապարփակ մաքրման պրոտոկոլ, որն անվճար է ձեռք համար: Հանրային առողջությունը խորհուրդ է տալիս տան բոլոր մակերեսների մասնագիտական համապարփակ մաքրում՝ համոզվելու համար, որ փոշու մեջ մնացած աղտոտիչները հեռացվել են: Ահա մի քանի քայլեր, որոնք կարող եք ձեռնարկել բարելավելու ձեր տան միջավայրի պայմանները.

Քայլ 1. Նախքան սկսելը

Գրանցվեք Հանրային առողջությունում. այցելեք ph.lacounty.gov/media/gasleak կայքէջը ձեր կենցաղը գրանցելու նպատակով: Սա կօգնի մեզ կապնվել ձեզ հետ՝ ձեր ընտանիքին անհրաժեշտ ծառայություններ տրամադրելու նպատակով, ինչպես նաև թույլ կտա մեզ հետևել համայնքի առողջությանը վերականգնման գործընթացի ընթացքում: Գրանցումը կամավոր է: Հանրային առողջությունը գաղտնի կպահի տվյալները:

Քայլ 2. Օդափոխեք ձեր տունը և բացեք ջրի ծորակները

- Օդափոխեք ձեր տունն առնվազն 12 ժամվա ընթացքում. բացեք դրսի բոլոր դռները, պատուհանները, ներսի դռներն ու մեծ պահարանները: Սա կարող է արվել մի քանի ժամ շարունակ մի քանի օրվա ընթացքում:
- Բացեք ջրի բոլոր ծորակներն առնվազն 30 վայրկյանով յուրաքանչյուրը, և իջեցրեք բոլոր գուգարանների ջուրը, եթե տանը ոչ ոք չի բնակվել:
- Մի միացրեք կենտրոնական հովհարման կամ ջեռուցման/հովհարման/օդորակման (HVAC) միավորները, մինչև չկատարեք քայլ 3-ը:

Քայլ 3. Հեռացրեք և փոխեք օդի ֆիլտրերը

- Փոխեք օդի ֆիլտրերը ձեր HVAC համակարգերում՝ ընտրելով միջին կամ բարձր արդյունավետության մասնիկների ֆիլտրեր («MERV 8» կամ ավելի բարձր, որը մատչելի է գործիքների ու տան բարելավման շատ խանութներում): Օգտվեք փոշու հասարակ դիմակից ու աման լվանալու ձեռնոցներից՝ հին ֆիլտրերից դուրս եկող փոշու հետ փոխազդեցությունը նվազեցնելու համար: Տեղադրեք հին ֆիլտրերը պլաստիկ տոպրակների մեջ, ու այնուհետև աղբարկղ նետեք այդ տոպրակները: Համոզվեք, որ նոր ֆիլտրը ձեր հնի նույն չափսին է:

- Փոխեք օդը մաքրող դյուրակիր սարքերի կամ HVAC «Air Scrubber»-ի ֆիլտրերը, և հետևեք այս համակարգերի արտադրողի բոլոր այլ հրահանգներին:
- Միացրած թողեք կենտրոնական հովհարման ու HVAC միավորներն առնվազն 12 ժամվա ընթացքում՝ բաց թողնելով դռներն ու պատուհանները:

Քայլ 4. Ստուգեք՝ կա արդյոք յուղալի նստվածք ձեր տանը

- Ստուգեք՝ կա արդյոք յուղալի նստվածք կոշտ մակերեսներին, մասնավորապես դրսում (օրինակ, բակի մակերեսներ ու կահույք): Մի կպեք յուղալի նստվածքին, քանի որ այն կարող է մաշկի գրգռում առաջացնել:
- Դեռ նետեք մրգերը, բանջարեղենը կամ այլ սնունդները, որոնք յուղալի նստվածք ունեն: Կարող եք ուտել նոր մրգերը կամ բանջարեղենը, որոնք աճում են ձեր այգիներում:
- Եթե որևէ յուղալի նստվածք եք նկատում սննդի կամ այլ մակերեսների վրա, զանգահարեք Southern California Gas կազմակերպություն (SoCalGas), որպեսզի նրանք անձնակազմ ուղարկեն այն գնահատելու ու մաքրելու համար, եթե անհրաժեշտ է: Կարող եք զանգահարել SoCalGas Aliso թեժ գծի 818-435-7077 հեռախոսահամարով կամ էլ. նամակ ուղարկել ResidueCleaning@socalgas.com հասցեով՝ գնահատման ու մաքրման ծառայություններ խնդրելու համար:

Քայլ 5. Հագուստ և սնունդ

- Բնակիչները, հնարավոր է, ցանկանան լվանալ իրենց անկողնի սպիտակեղենն ու հագուստը՝ որպես զգուշացման լրացուցիչ միջոց:
- Դեռ նետեք այն սնունդը, որը հերմետիկ փակվող ամաններում չի պահվել ձեր տեղափոխության ընթացքում:

Քայլ 6. Մաքրում

Կրկնում ենք, որ Հանրային առողջությունն անպայման խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտական ծառայությունից ձեր տունը մաքրելու համար, և հրահանգել է SoCalGas-ին առաջարկել ու իրականացնել ներսի համապարփակ մաքրման պրոտոկոլ, որը մշակվել է Հանրային առողջության կողմից: Մաքրումը նաև կարևոր է հեռացնելու համար ծաղկափոշին, բորբոսը կամ այլ աղտոտիչները, որոնք, հնարավոր է, կուտակվել էին, քանի դեռ տանը ոչ ոք չեր բնակվում: Այնուամենայնիվ, եթե դուք ծրագրում եք ինքնուրույն սկսել մաքրելու գործընթացը, ահա անվտանգության մի քանի միջոցներ, որոնց պետք է հետևեք.

- Անվտանգությունն առաջնային է. նախազգուշացեք մաքրելու ընթացքում՝ կրելով փոշու դեմ շնչառական դիմակ: Ընտրեք դիմակներ, որոնց վրա գրված է «NIOSH», և կամ «N95», կամ «P100». դրանք վաճառվում են գործիքների ու տան բարելավման խանութներում: Խորհուրդ են տրվում նաև աման լվանալու սովորական ձեռնոցները: Երեխաները, հղի կանայք,

ասթմա, բորբոսի ալերգիաներ կամ այլ շնչառական վիճակներ ունեցող մարդիկ կամ թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ չպետք է մասնակցեն մաքրմանը:

- Օգտագործելով խոնավ կտոր՝ մաքրեք բոլոր պատերը, սեղանները, օդորակման օդանցքներն ու բոլոր այլ կոշտ մակերեսները, որոնք կարելի է ապահով մաքրել խոհանոցային օճառով ու ջրով: Թույլ տվեք, որ խոնավ կտորով մաքրած բոլոր մակերեսներն ամբողջովին չորանան:
- Փափուկ կտորները, ինչպիսիք են՝ կահույքի երեսպատումը, գորգերն ու վարագույրները, պետք է ենթարկվեն մասնագիտական գուրռչիով մաքրման: Հանվող կտորները պետք է ենթարկվեն մասնագիտական քիմիական մաքրման:
- Ձեր տան սովորական փոշեկուլը մի օգտագործեք մաքրման համար. այդ դեպքում փոշին կարող է կրկին շրջանառվել տան մեջ, ինչն ավելացնում է ազդեցության հնարավորությունը: Ձեր տան առաջնային փոշեկուլով մաքրումը պետք է կատարվի մասնագիտական մաքրման ծառայության կողմից:

Քայլ 7. Օդի խողովակների մաքրում

- Հանրային առողջությունը հրահանգում է SoCalGas-ին մաքրել բոլոր HVAC համակարգերի խողովակները՝ որպես ներսի համապարփակ մաքրման պրոտոկոլի մի մաս:
- Հնարավոր է, որ դուք ցանկանաք ինքնուրույն դիմել մասնագիտական կազմակերպություն խողովակները ստուգելու ու մաքրելու նպատակով: Պահանջվում է խողովակների որակյալ մասնագիտական մաքրում, քանի որ սխալ մաքրումը կարող է վատթարացնել ներսի միջավայրի պայմանները:

Լրացուցիչ տեղեկությունների համար.

Դիմեք Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժանմունք՝ (213) 738-3220
հեռախոսահամարով կամ այցելեք www.publichealth.lacounty.gov/media/gasleak կայքէջը: